


ՏՆՕՐԻՆ - ԽՐԱԳՐԱՊԵՏ  
Հ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur Rédacteur en chef  
H. MAMOURIAN

ARÉVÉLIAN NAMOUL,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՏԱՐԻՆՆԵՐ 500 ՂՐԵ  
ՆՅՈՍՍԵՍՆԵՐ 250  
ԵՌԱՍՍԵՍՆԵՐ 150

Բաժանորդագրութիւնը կ'սկսին  
ամեն ամսոյ 1 ին և 15 ի

100 ՓԱՐՍ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐՍ

### ԿԷՍ-ՄԻՋՈՑՆԵՐ

Կենսունակ ժողովուրդի մը խառնը կ'ամենապահանջները  
Աշխարհաւեր պատերազմէն վերջ, առիթներ յաճախակի ներկայացան, որոնց մէջ անդամ մըն ալ ապացուցուեցաւ թէ հայ ժողովուրդը, այդ տնօրինակ փորձութիւններէն յետոյ, պահած է իր վերապրելու, ուսման, յառաջդիմելու, վերակազմուելու կենսունակութիւնը, սակայն միթէ այդքանով պէտք է բաւականանալ, միթէ կրնանք մեր կենսունակութեան վրայ առաւելած գոհացում գտած ըլլալ

Ասկից դատ ուրիշ պարագայ մըն ալ կ'ներկայանայ մեր առջեւ, որու վրայ չանդադառնալ կարելի չէ, և որմէ կարեւոր ունի մեր ժողովուրդին կենսունակութեան մղում տալու սղղակը

Մեր վերին իշխանութիւններն, մեր խօսքն բնականաբար Կ. Պոլսոյ կեդրոնական վարչական մարմիններու կ'ուղղուի, իրենց պաշտօնին ու ստանձնած գործին բարձրութեան վրայ կ'զանուի, իսկի կ'զոհանքն մեր ժողովուրդին պահանջները և մղում կ'աջողին ապա Հայ ժողովուրդին ձեռնարկելու

Տխուր հարկին տակ կ'զանուիք բնիւր, որ մեր վերին իշխանութիւններն այդ կորուստն ու կենսունակութիւնն ցոյց չառնին ցայտօր և երեւոյթներէն դատելով՝ չպիտի յաղդին նաև ապա վստի

Չիւղազարդին լիսոյ առարին բոլորէջու և ազգային գործերն կ'յամանին մնալ միևնոյն անորոշութեան, միևնոյն սեկոյնութեան և միևնոյն կէսմիջոցներուն մէջ

Արեւելքի ժողովուրդոց յատուկ դժուարութիւնն, ձգձգուածութիւնն, կրկնապար միջոցներն կ'կիրարկուին նաև մեր մէջ, կարող, որչէ և անմիջական գործ ու գործադրութիւն չկայ և չպիտի կրնայ ձեռք ձգուիլ

Թուլամորթ, յամեցող, անկայուն վիճակ մը, որ տարիէ ի վեր կ'շարունակուի, պատճառ դառնալով կարգ մը կ'առակցութիւններու, շարունակական յարձակումներուն ենթարկուելու, որմը գործադրարար իրաւացի կ'սկսին գառնալ, եթէ ծայրայեղութեանց մէջ չմտորին և իրենց անպաշտպանելի տեսակէտներուն վրայ չբաժանին

Ազգ. ժողովն մեր ժողովուրդի համար յեղյուցուած կենսունակութիւնն ցարգ ցոյց չտաւ, զի ոչ իսկ կրցաւ կազմակերպուել, և քննել յանձնաժողովներու լսելիքներն մէջ կորսուած է

Մեր կողմէ մեծամասնութեան խնդիրն սկսած է անհանգիստութիւնը որո՞՞ք մը ստեղծ և միևնոյն ժամանակ զայրոյթ պատճառել սոյն պարտադրեց երեսփոխաններուն կ'կատմամբ, որ քանի մը ժամերու զոհողութեան առջեւ ստան ստապարներութիւն մը ցոյց կուտան և կերպով մը կ'իմացան ազգին վրայ, առանց ըմբռնելու որ օճիք մըն է իրենց բրածն, որովհետև ազգին ներկայ ձգտումին մէջ կ'իջարանան իրենց պարտականութիւնն, պարտաշտնութիւն մը՝ որ այսօր ամեն խիղճ ունեցող հայ անհատ նուիրական պէտք է համարէր

Արեւելքի ժողովուրդներուն համար ժամանակը կարևորութիւն չունի, անոր սղուծեան վրայ անկատար է կազմած գործափարն, սակայն այդպէս պէտք չէր ըլլար զէջ Հայոց համար, մանաւանդ Ներկայ պայպաններուն մէջ Ամէնքե աւելի մեծը՝ Հայերս՝ հարկ է որ ըմբռնել թէ՛ մեր մէն մի կորսուած ժամն, տարիներու ազդեցութիւնն է որ կ'բնայն խեղճ ազգին ճակատագրին վրայ

Ազգ. ժողովոյ ընթացքն ու գործելու եղանակն յատկապէս կ'ազդու պէտք է կէս-միջոցներ ի գործ կ'գրուին առիթ մը ի վեր

Կարգ մը որոշումներ կ'մնան անկատար կամ կ'զանգաղին, Հայրենիքի Տուրքն սաղմային վիճակէն հազիւ գորսու ելած որդիք մը չցուցադրեր, որբայնամ գործն անգոհացուցիչ վիճակ մը ունի, տարազրկաց և որբերու օշնութեան ձեռք կարկառելու համար կ'զմուած յանձնաժողովոյ գոհմը գատարկ է

Այս և առնոց նման կարգ մը խնդիրներ կ'մնան կրտաւոր կամ կէս-միջոցներու տակ

Երուսաղէմի խնդիրն որ վերջերս տարբեր հանգամանք մը ստացաւ և բաւարարական անօրինութեան մը կ'կարօտի կէս-միջոցներով կ'շնայ Ազգային ժողովն ձգձգել, որպէս թէ 5-6 ասրուան յապաղում մը բաւ չհամարուիր, մինչդեռ կ'սպասուէր որ կարող և սրայ որոշումով մը վերջնէր իր օրակարգէն

Ոչինչ կայ միթարական մեր սղղաբն կեանքի էջերուն վրայ, աշխեան գանդաղութիւնն և անորոշութիւնն կ'տիրապետեն և կէս-միջոցներով կ'շնան գործի գլուխ գտնուողներն գոհացում տալ վարչական գործոց, առանց նկատի առնելու որ այդ կէս միջոցներն վառնալու կ'զանան ազգին համար և վաղը կրնան աղիտարբը ըլլալ

Ազգային ժողովոյ մէջ մեր մասի վրայ համարած քանի մը երեսփոխաններն խօսելու մարմալէն բանուած, որքան տակի բարեբար բան մը ըրած պիտի ըլլային, եթէ այս շատախօսութիւններն մէկ կողմ դնելով, որոշում ու գործ ձեռք բերելու հետապնդին, որպէսզի նիսակ նիսակ չգրեւելին օրակարգի խնդիրներն և ժողովուրդն ալ իր վստահութիւնն անվերապահօրէն նուիրէր իրենց, համոզուելով որ ազգային վերին մարմիններն իրապէս գործ կ'տեսնեն և կ'հետաքրքրուին ազգին ստիպողական կարիքներով և պահանջներով

Ազգ մը, ժողովուրդ մը կրնայ կենսունակութիւն, կրնայ ձեռնարկելութեան ոգի ունենալ, սակայն ինչի պիտի ծառայէին այդ զեղեցիկ ու զոհաւտելի յատկութիւններն, երբ զինք ուղղելու, առաջնորդելու կոչուող ներին իշխանութիւններն, իրենց կէս-միջոցներով, զանգաղութիւններով, ժամաղածա-

նութիւններով արգելք հանդիսանալին իր կենսունակութեան և գործելու հասնողին

Երբ ժողովուրդի մը ներկայացուցիչներն չեն ըմբռնիր իրենց վստահուած պաշտօնին կարևորութիւնը, երբ չեն կասկեր թէ՛ այդ պաշտօնը ծանր պատասխանատուութիւններ գրած է իրենց վրայ, թիթիտօրէն կ'վերաբերուին, արհամարհանքով բարձրէն կուզեն դիտել ու գտնել իրենն որ անձերն, այդ ներկայացուցիչներն որ մըն ալ հանդիսանա կ'ըլլան իրենց վստահութիւնն ու թաղումին, այդ տեսակ պարտադրի մը առջեւ սթապիլ օգուտ չունենար, հակառակօր կողմն է որ կուտայ իր օճիկէն բանել ու իր տեղն արգելի, իսկ թէ ապա ինչ կ'պատահի, ո՞վ կ'տուժէ, ո՞վ կ'ափսոսայ շատ այսօր է ու որոշ

Ներկայ պայմաններուն տակ, ամօթ մը, նախատինք մը պիտի ըլլար մեր ժողովուրդին համար անտարբերութեամբ սողորուած, չըսելու համար անգործութեամբ, ներկայացուցիչներ ունենալ, երբ այդ ժողովուրդն անարկու տառապանքներէ, աներկալայելի զոգրութեաններէ վերջ, կ'ուզէ վերապրել, կ'փափաքի վերածնել և քաղաքակիրթ ժողովուրդներու շարքին մէջ իր արժանի գիրքը գրուել

Հ. Մ<sup>2</sup>

### ՄԵՂԱԿԱՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՂԵՄ

Արեւելեան Մամուրի շարաթ օրուան «Արեւին զէմ նախատինք» խմբագրականը իրաւամբ կը մեղադրէր Գաղտնիկական կուսակցութիւնը որ բարեգործականի հայ ցուերու ըստօրում տալու անհամարած այդ նախատեսական ընկերութեան զէմ առջի օրէն զենուած կը հարուածէ, կը հոլածէ անգալ ջանալով վարկաբեկի գալն յաչս ժողովրդան, հակառակ այն բարեբերուն այն մեծամեծ ծառայութիւններուն որ մատուցած է ու կը մատուցանէ ազգին իր հիմնարկութեան բարեբաւարի օրէն

Գաղտնիկականներու սրբան անպատեհ նոյնքան և անիրաւ այդ յարձակումներուն մէջ առաջին տեղը կը բռնէ, ինչպէս կը գիտար «Մամուրի» խմբագրականը Բարեգործականի գրամատուցութիւն անձեռնմխելութեան պարտանձ ազգին մեծ ցուերու ու կարեքին մէջ պէտք է եղի որ ինչեւ ընկերութիւնը ամբողջ իր վերջին բրիտեր ծախսէ ազգին համար»

«Մամուրի» խմբագրականը կարգ մը իրաւացի խորհրդածութիւններն ու զիտողութիւններ կ'ընէ ի պաշտատնութիւն Բարեգործականի (եթէ երբէք պէտք կայ անոր) կը շատագրէ գրամատուցութիւն անձեռնմխելութեան մասին կանոնագրէն չչեղելու անոր ուղիղ ու խոնական ընթացքը, յոռաջ կը բերէ ընկերութեան «Բառու» արգիւնքները իրեն ջախճախիչ պատասխան հակառակորդներուն, այլ սակայն կը մտնայ խիստ կտկան և խիստ իրաւացի կէտ մը՝ որու առջեւ լուի միայն կը մնայ հակառակորդներուն Անոնք կը պնդեն որ Բարեգործականը իր կանոնագրին կ'մնական մէկ կէտը գոհելով իր բոլոր ունեցածը ծայրագոյն տայնապի մէջ գրամատուցութեան տակ գնէ նայնիսկ իր բարեգործ ստապի պարպելով գատարկելով կ'աւ, այլ կանոնի ինչպէս և խոնակութեան խոպա հակառակ այդ անպիս գոհողութիւնը ընկելով Բարեգործականի պիտի կարգանայ մէջտեղ գտնուած ծախսածաւ շարքը գործունէ այսինքն մեր սովորակ տարաբող կերպը ներք վրկի կրտաւալ ո՞չ կերէ որ պարզ է պատճառը կազմուելու վրայ կող իր ստակալն նիւար ու անբաւական գրամատուցելու անգալու ամբ մը պիտի բաւէ սողեցնելու կ'ընկելու և կողմաւ թշուառ տարագրուները

### ԼՍՏԵԼՔՆԵՐ ՄԵՋ

Մարդու նկարագրին քանի մը պարագաներն մէջ ընդհանրապէս երեսան կ'երէ

Այս պարագաներն մին է իր խօսքին միւս արբեցողութիւնն, բարեկեցութիւնն և վերջապէս կուսակցութեան լիակցութիւնն

Այս վերջին պարագան նորութիւն մըն է և սակից տարիներ առաջ մարդու մը չկայապի յայտնութեան մէջ որ և է զի մը չունէր, բայց ան օրէն որ հայոց մէջ կուսակցութիւններ կ'զմուեցան այս եւս մտաւ այդ



չարքին մէջ և թերեւս աւելի զօրաւոր զարմա քան միւս պարտագործերը:

Այս յառաջարկներէն յետոյ ըսեմ որ այդ կուսակցութեան քէն բանումներու հետ խօսել կամ խօսելու փորձ ընել աւելորդ յոգնութիւն մը ըլլալէ զատ պարզապէս ճարտար ընել պիտի ըլլար ոչ միայն ինծի ալ նաեւ ընթերցողներու համար:

Որովհետեւ մարդ մը, երկատուող մը, պատանի մը, տղակ մը մանաւանդ որ իր գործածած բառերուն իսկական նշանակութիւնն չգիտեր կը նմանի այն մանուկին որու առջեւ կրակարան մը կ'զննու որ խոսող, ի՞նչ կ'ըլլայ, վերջ ի վերջոյ կամ անոր մէջ պիտի իյնայ ու այրի կամ պիտի զլլատորէ և տունն այրէ ու մոխրակոյտի վերածէ...:

Ճշտ այսպէս ալ երբ տղեկներ կ'ընեն որ և է կուսակցութեան մը շահերն պաշտպանելու, աւելի վնաս կ'հասցնեն անոր քան թէ օգուտ, աւելի վտանգուտ կ'զուարթան իրենց համար քան ուրիշներու...:

Իսկ երբ այդ տղեկներն, մանկիկներ պարզապէս, որ ըմբռնատար գերբ կ'ուզեն ստանձնել և կ'կարծեն թէ՛ հակառակ են և կ'գործածեն այն պիտի բառեր, որոց նշանակութիւնն, արժէքն ու ազդեցութիւնն չեն ըմբռններ, չէ՞ որ իրենց պատկերն իսկ և իսկ կ'ընկրկեն իրենց գրութեան մէջ...:

Եւ անոնց զէմ լրջօրէն պատասխանել, անոնց ըստմանն ու զրի առածներն իբրեւ լուրջ համարել ու պատասխանելու զիջանել, է՛հ պարզապէս զրիսեր հեղինակ ու ծաղրել պիտի ըլլար, կ'ըստ յայտարարողներու որոնք բարձր, բարձր շատ բարի ու միտմտ են, կ'ըստ իրենց վրայ, որովհետեւ իրենց նկարագիրն է որ կ'պատկերացնեն և ես չպիտի ուզէի որ անոնք այդ ազդեցութեամբ զուրս գային, որովհետեւ աշխարհ է, մարդ չլիտեր, կ'ըլլայ որ իրենց բռնութեան զէմ զիջանց գտնուելն ու զլայնին զանազ գործածած ըլլալնուն, անոնց իսկական նշանակութիւններն ըմբռնելով վերջապէս որ մը...:

ԵՍ

### ԱՊՊԱԿԱՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Ոստքա թրքական խորհրդարանին համար է, որուն համար երեսօթխանական ընտրութիւնները կատարուելու վրայ են:

Արդէն իսկ ընտրուած մէկ քանի մէկ պատանիներն կրնանք երեսօթխան թէ ի՞նչ ջնախարհիկ խորհրդարան մը պիտի բռնեն մեր հարեանները:

Այսպէս, օրինակի համար, Մաղնիսայէն թեմական ներկայացած է Այազի կուսակալ Բահրի պէյլին, տղան լեւոր տանող և փրկանք՝ պահանջող չէթէրներէ մէկը և նկատի ունենալով իր վայրած ժողովրդականութիւնը, ապահովաբար մէկտես պիտի հոչակուի ինչ տակաւին չէ հաշակուած:

Ուրիշ ընտրուածներուն մէջ ալ անշուշտ պիտի չարկային ջարդարաններ, չէթէպաշիններ, կողմակցիներ:

Եւ որ մըն ալ այդ մարդիկը պիտի դան բազմիլ Սապր փաղաբի ժողովարանը:

Հոն է որ պիտի սկսի բուն կատարողութիւնը:

— Էթէնտիներ, պիտի ըսէ չէթէ-ճի մը, կ'առաջարկեմ որ, հայրենիքի փրկութեան համար, անմիջապէս աւարի տանք օսմանեան պանթան...:

Նախագահ. — Ի՞նչ է ժողովին կարծիքը այլ մասին:

Քապուչ, Կեփեփիլ, Բապուչ, պիտի գոչեն ամեն կողմէ:

Թերեւս գոտուի պարկեզա մէկտես մը որ զիտուութիւն ընէ հայրենիքի այդ ձև փրկութեան մասին:

Բայց հազիւ թէ բերանը բացած՝ յարձակումները պիտի սկսին:

— Դուաճա՛ն, վա՛տ, հայրենիքի թշնամի, ազգակործան, ևն:

Եթէ պարկեզա մէկտեսը յամառ իր տեսակէտը պաշտպանելու եաթազան, գաշտ, սօփա, բ՛ւլ լիք պիտի բարձր մտան ամեն կողմէ և մարդը՝ լեզուատուս՝ զուրս պիտի փակել ժողովարանէն:

Եւ անա՛ ձայններու ջախջախել մեծամանու թեմար պիտի որոշուի աւարի տալ օսմանեան պանթան, հայրենիքի փրկութեան համար:

Այս գեղեցիկ քայլը անշուշտ անշուշտ և վերջինը պիտի ըլլայ, չէթէպան հայրենասիրութիւնը իր գործունէութիւնը պիտի շարունակէ մինչև որ աւարի տալիք բան մը չմնայ:

Ու այն տանն մէկտեսական ժողովը հանդիսուոր նիստի մը մէջ պիտի յայտարարէ թէ՛ հայրենիքը վերկուած է:

Հետեւն իջնող երեսօթխաններէ կարծեմ անկէ տարբեր գործունէութիւն սպասել յիմարութիւն է:

Բարեբաղդաբար, մեղի համար, մէկտեսներու առած որոշումները կարելի պիտի ըլլայ գործադրել, գոնէ Պօլսոյ մէջ:

Բայց, ի փոխարէն, այդ տեսակ մէկտեսներով, շտապողութեանն ու անգործութեանը կատարելով պիտի ըլլայ պաւաններու մէջը «Ժող. Ձայն» ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՅԲԵՐԸ 1917 — 1918 Բ.

Ժ.

#### ՊՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՍԻՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈՅԿ. ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ

Ռուսական Յեղափոխութեան ամենազլխաւոր ողբերգութիւնը կարելի է համարել Ռուսական բանակի խնդիրը: Դեռ առաջին օրերէն ծայրայեղ տարբերի ազդեցութեան տակ ղեկի գործնականները ուղարկուեցան յեղափոխական օկոմիտարները՝ որոնք ձեռնարկ նպատակն էր զինուորներու բացարկել յեղափոխութեան նշանակութիւնը և անկէ գալիք հաղթարձակութեան վախճանով թէ երկաթէ կարգապահութեան վարժուած սպէս Ռուսական բանակը կորոզ էր մի օր իր զէնքը գործնել յեղափոխութեան ղեկ, ինչպէս պատահար էր այդ 1905ի Ռուսական Յեղափոխութեան փորձին, այդ «կոմիտարներ» ամէն ճիշդ թափեցին բանակներու մէջ քայքայել կարգապահութեան ոգին: Նոյն ինքն «փրկասփառ» սօսիւթի» Քէրէնսկին էր որ պատերազմական նախարար եղած միջոցին տուեց հրամաններ որոնք հումանիշ էին անիշխանութեան. — այսինքն ուս հասարակ զինուորները ալիս չը պէտք էր բարեւէին իրենց սպաներին և փոխադարձաբար զիրար պիտի կռչէին «ընկեր» (տովարիշ), սպաները այլևս չպէտք էր կրէին ուսանոցներ, և թէ ամէնքն ալ ունէին հասարակ իրաւունքներ իսկ երբ 1917ի Նոյեմբերին Պօլշէվիքները արտաբացիկութեանը ու իրենք անցան իշխանութեան զուլուր, անոնց պատերազմական նախարար կրիլինսկի հրատարակեց ընդհանուր զինաթափութեան զրատուցումի հրաման, ազատութիւն տալով միլիոնաւոր Ռուս զինուորներին թողնել իրենց զիրքերը և վերադառնալ իրենց տունները: Հակառակ հապարաւոր գառալութիւնների, փոխառանձինրի և յարածուս քայքայման, Ռուսական Անդրկովկասեան բանակը գետ մինչև այդ օր կը բովանդակէր մօտ 300,000 զինուոր, որոնք կը բռնէին Հայկական ուղիմտակաւոր Սև-ձովէն մինչև Չաղաթ, — Դեռ մինչև այդ օր Ռուս-Հայոց-Վրացական զորքերը կը կազմէին մի ամբողջական թիւրքերի ղեկ սկսեալ Տրապիզոնի արևմտքէն մինչև Կարին, Բիլի, Խնուս, վանալ մինչև Ուրմիա ու Համատան, Քիրման,

չան ու Քիլիկիա-Ռոստոմի գիծը, ուր Պիլիքախոսի զօրազույր կը գործակցէր Պաղատաի Անդրկովկաս բանակներին հետ:

Կրիլինսկի հրամանը հրատարակուելուն պէս, հայկական ուղիմտակաւոր զինուորները անխափր սկսեցին թողնել իրամասերը. ճախել զէնքերը ու վերադառնալ զէպի իրենց տարները, ինչ միջոցով որ անոնք կարենային Այնապէս օր, մէկ ամսուան ընթացքին թիֆլիսի և Երզնկայի յատուշայած զիրքերի մէջ չէր մնացած ուրիշ պաշտպանութեան զիծ, ալ միայն ցրտուցան հայ կանոնաւոր զօրքեր ու կամաւորներ:

Թիւրքերի արեւը որ անկասկած կը թուէր օրէ օր հակել զէպի արևմուտքը, վերոյիջեալ զժրագող հանրամանրների բերումով, յանկարծ բարձրացաւ Արևելեան հորիզոնին վրայ, աւելի պայծառ քան երբէք: Բնական էր որ թիւրքերը պիտի աշխատէին ամէն կերպով օգտուել ստեղծուած նոր զրուութեանն ու ծրագրել Անդրկովկասի գրաւումը: Ինչպէս ծանօթ պէտք է լինի մեր ընթերցողներին, 1917ի Նոյեմբերին ու Դեկտեմբերին սղարի լուրեր կը հասնէին թիֆլիսի և վանքի զրուսի միջև գտնուած հայկական կեդրոններէն: Ռուս զինուորները իրենց նահանջի ճանապարհին վրայ կը կողպակին հայ զիւղերը, կը խոչտանգէին և ի հեղէպի Անդրկովկաս փոխադր Արևմտահայ փոխապետները: Մասիս ստորտներ առանձնապէս և Անդրկովկասի ամբողջ տարածութեան վրայ ընդհանրապէս կազմակերպուած թիւրք-քիւրտ — թաթար հրատարակուածքեր կը յարձակէին անպաշտպան հայ զիւղերու վրայ և կը պահանջէին ու կը կողպակէին անխնայ:

Այդպիսի եղականօրէն զժուարին հանրամանքները մէջ մեր նորակազմ Ազգ. Խորհուրդը զիւրութեամբ չէր կարող շահիլ վարդէ գափիները: Ընդունելով մէկտեղ որ այդպիսի անիշխանական պարագաների մէջ Հայոց Ազգ. Խորհուրդը չէր կարող գործել հրաշքեր, միւս կողմէ անհնար է զրտել չտալ որ կուսակցական նեղմիտ հաշիւներով թէ Ազգ. Խորհուրդի մէջ և թէ վարագործին ետև պահուած որոշ տարբեր ոչ միայն չկարողացան գրտութիւնը գննել Հայութեան պաշտպանութեան տեսակէտէն, այլ և աւելի նպաստեցին հնարաւոր ոյժերի տարբարումն ու քայքայման: Դեռ մինչև այդ ժամանակ Անդրկովկասի մէջ գերագոյն պետական հեղինակութիւնն էր Անդրկովկասեան Առանձին կոմիտէն՝ բողոքացած Խարլամովէ, Պապաշահանէ, Չիսնիկէի ու Մաֆարօֆէ: Դաշնակցականներ ամէն կերպով ղեկէին սպաշանեաններ, որովհետեւ նա «Իրենցմէ» չէր: Անոնք փցուան վեճերով ու «Թէօրիական» վիճաբանութիւններով աւելի ու աւելի վերաւորեցին վրացիներին, որոնց հետ մեր գործակցութեան մեթոտներէն կախուած էր մեծագուշ. մեր պաշտպանութեան խնդիրը Անդրկովկասեան զիւղացիական համագումարին մէջ Դաշնակցութեան փրիխոսկայ խոհօրդ Աւետիք Շահաթուսեանի ճառը խորունկ անվատասութիւն ներշնչեց վերացիներին, վկայ են այդ ժամանակի վրացիական մամուլի քննադատութիւնները:

Կրիլինսկի հրովարտակի պատճառաւ ստեղծուած կացութեան հետեւանքները ուսունասիրելու համար Անդրկովկասեան Առանձին կոմիտէն Երզնկայ ուղարկեց մէկական հայ վերացի և թաթար պատգամաւորներ անդրկովկասեան իսկական կացութիւնը Ռազմածուկատէն անոնց վերադարձին, հայ պատգամաւոր Չամախան ամենաանսու գոյներով ներկայացուց բանակի վիճակը և ընդհանուր զրուութեան պատկերը: Նա եղբակացուց որ ինչ թիւրքերը վաղ սկսէին յառաջ շարժիլ, չկար ո՛ն է կազմակերպուած ոյժ պանոնք կասեցնելու:

Իսկ երբ Հայ ազգի պաշտպանութեան ծրագրի ուսունասիրութեան

ըսպէին Չօր. Նազարբէկօֆ, այդ պատկառելի ծերունի զինուորականը, պաղատակցին կը խնդրէր որ Հայ բանակի մարտական ոյժը և ազդեցութիւնը վերականգնելու համար անհրաժեշտ էր վերահաստատուել հին զինտիրակները ու անհուսու պատիժը, միեւնոյն Չամախան ու իր պէս յեղափոխականացած թեթեւ ընկերներ այդ կը համարէին հակադիմադրական քայլ, և արգիլեցին Նազարբէկօֆի ծրագրերը:

Մի քանի ամիս յետոյ երբ թիւրքեր հայ տնտեսապան կանանց, մարդկանց ու հայ զինաթափ զինուորների վերակները վրայէն անցնելով մասնաճիւղ, Ալեքսանդրապոլ, Գարաբիլիսէ և թիֆլիս, միեւնոյն Չամախանը ինքզինք նշանակել տուաւ մեր հանրապետութեան զինանագրութեան գործակատար վրաց կոռաւորութեան մօտ ի թիֆլիս:

Փաստերը շատ աւելի հստորական են քան խաբերը:

ԱՐՇԱԿ ՍԱՅՐԱՍՏԵԱՆ

### ՔԱՆԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

«ԺՈՒՐՆԱԿ ՏՕՐԻԱՆ» հրատարակելով «Թուրքիոյ» Հաշտութեան համառաջարկի լուրը, սապէս կ'զրէ կըմըղուինք հարցնելու թէ, մառավարութեան և աղբային կազմակերպութեանց միջև կայացած համաձայնութիւնը կատարեալ ու բացարձակ է: Մենք մեր իսկական ազդեւորներն չնորհու, այսօր կրնանք ճշգրտապէս յատկանշել կատարութեան զիրքը այս հարցու մին հանդէպ: Թրքական կառավարութիւնը, արգարեւ այն վստահութիւնը ունի թէ, պիտի կրնայ համաձայնութեան մը յանգիլ Անատոլիայի այդ մարզերուն հետ: Եւ այս վստահութեանն ու ժողոված, ան խաղաղութեան առաջարկ մը ըրած է, յուսալով որ Միլլի թեմալիսթը զինք յուստիարա չպիտի ընէ: Արդէն, ինչպէս մեզ կ'ըսեն, բազմաթիւ կէտերու վրայ համաձայնութիւնը գոյացած է, կառավարութեան և Միլլիի պետ, Մուսթաֆա Բէմալի միջև:

Գիւլիսթի փոփոխութիւն մէջ ներքին գործոց նախարարութեան կողմէն Ռէշիտ պէյի մասնաւոր պաշտօնով Եւրոպա ուղևորութիւնը յետաձգուած է մինչև նոր Խորհրդարանին գումարումը Ռէշիտ պէյ, այս յետաձգման տաթիւ ըսած է թէ, իր պաշտօնը լաւ կատարելու գործը զժուար պիտի ըլլայ, քանի որ Թուրքիոյ մէջ կացութիւնը տակաւին կայուն և վերջնական վիճակ մը չէ ստացած: Միայն Խորհրդարանը ըսած է ան պիտի կրնայ տալ մեր վաղուան քաղաքականութեան զարգացման շափը և ուղևորութիւնը:

ՊՈԼՍԷՆ կը հեռագրին թէ Տիւրպէթի, Տրապիզոնի, Գաթիսուսի և Գոնիսի հաղորդակցութիւնները Մայրաքաղաքին հետ խզուած են Այս խզումին պատճառները անձանօթ կը մնան:

ՊՈԶԲԵԼԻ մէջ արևմտալի ղէպք մը պատահած է ընտրութեանց աւիթով: Հաստատուած է որ, գաւառի այս կողմը Մուսթաֆա Բէմալի կուսակցները պայքար մը մղած են ի թիւրքի անդամներուն հետ, անոնց բոլոր ձեռնարկները վիճակներու մտօք: Եւ այս պայքարներուն մէջ որքան որ ըսուի թէ ազգայնականները օրինաւոր միջոցներու կը զիմեն, Բէմալի ընկերները սպօրէն միջոցներ գործադրած են:

Ներքին գործոց նախարարութիւնը որոշած է կազմել մասնաւոր յանձնախումբ մը որ պաշտօն պիտի ունենայ քննել ընտրութիւններու տաթիւ եղած պահպանները և խորհիլ միջոցները որոնք հարկ եղած պարագային պիտի գործադրուին, անշուշտ ընտրութեանց աւելի օրինաւոր ընթացք



# ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

27 Նոյեմբեր 1919

## Հայաստանի (Մանսան)

Ուսանողներն կ'ստեղծեն ինքնուրույն լիազոր պատուիրակ Զոր. Հարավային իր տեսած յիշատակագրով ԿԷ ՊԱՀԱՆՁԷ որ Ամերիկա ընդունի Հայաստանի «մանսան»:

## Հայ Բանակը կը յաղթանակէ

ԵՐԵՎԱՆ, 15 Նոյեմբ. — Չանգեզուրն ստացուած տեղեկութիւններու համաձայն, չորս օրուան անընդհատ կռիւներէ յետոյ Ասորիական զօրքերը կատարեալ պարտութիւն կրելով փախան Դարապազ, Չանգեզուրի Հայերու ձեռքը թողնելով գերիներ, 14 գնդացի, մեծ քանակութեամբ փամփուշտ, հաց, շաքար և ուրիշ մթերքներ:

(«Մանսան» 27-28)

## ՄԻ. ԹԻԹՕՆԻԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Իստախոյ տրտախին գործոց նախարար Մ. Թիթօնի իր հրատարակած յայտարարութիւնները:

## ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Թուրքիոյ նախարարութիւնը իր նախորդ հեռագիրն հաստատելով, ուզողները համաձայնական պետութեանց հաշտութեան համաժողովին կրկին կ'արդէ ու կ'իմրուի որ Թուրքիոյ հետ կնքուելիք հաշտութեան ժամ առաջ վերջանայ:

## ԻԶՄԻՐԻ ԸՆՐՈՒԹԻՒՆՔ

Իզմիրի մէջ ևս թուրք երեսփոխանական ընտրութիւններն կատարելու համար զիմուսներ եղած են համաձայնական ներկայացուցիչներուն մօտ Պատասխան տրուած է որ Այտընի կուսակալութեան մէջ գրաւման տակ գտնուած վարչերու մէջ ըլլալիք ընտրութիւններն իստանպուլի հաշտութեան պատճառով կ'ընդհատուին և կարգ մը արգելքներ յարուցանելու յայտարարուած է յետագիւր Այտընի կուսակալութեան ընտրութիւնները:

## ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Իտալիոյ նոր ընտրութիւններէն յետոյ երեսփոխանական ժողովոյ բացումը յետագուստ է:

## ԱԶԱՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Անգլիական կառավարութիւնն սակէ առաջ թուրքիոյ և Պաղեստինի միջև Ան ծովու ճամբով եղած առևտրական յարաբերութիւններն արգելած էր, այդ արգելքն վերացուած է և այլևս ազատ երթևեկ հաստատուած:

## ԵԳԻՊՏԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԸ

Եգիպտոսի նոր նախարարութիւնն կազմած է Եուսուֆ Վէհպի փառաշին վարչապետութեան տակ:

## ԱՄԵՐԻԿԱՆ ՀՐԵԱՆԵՐԸ

Ամերիկայի հրեայ մամուլը Փօքը Ասիոյ և ի մասնաւորի Պաղեստինի ազատագրումի յայտարարութեան ծերակոյտին վերաբերելով, այս մասին մամուլը մէջ կ'հրատարակէ բուն յօդուածներ և այլ յայտարարական պատճառ ցոյց կուտայ ծերակոյտը:

## ՊՈԼՇԵՎԻՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Իտալիայէ հասած լուրերու համեմատ պօլշէվիքները որոշած են ընդհանուր քուէակալութեամբ խորհրդարան մը կազմելու և հակառակորդ կուսակցութիւններու հետ համերաշխութեան պայմանները մը գտնուելու:

## ՌՈՒՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ռուսական կարեւոր թերթեր կ'ըսեն թէ՛ նոր նախարարութիւն մը կազմուելու որոշում տրուած է, ընդհանր չեզոքութեամբ կարգ մը յանձնաժողովներն և Մով. Քոլլաքի և Զոր. Տէրթիքի ևս հաշտութեան առաջարկներ ընելու տրամադրութեամբ:

## ՊՈՒԼԿԱՐ ԼԻԱԶՕՐԸ

Ֆրանսայի տրտախին գործոց նախարարութիւնը անցեալ երկու շաբթի օր Պաղեստինի հաշտութեան ժողովին պատուիրակ և վարչապետ՝ Մ. Սիմոնը լավութի պաշտօնագրերն քննած է:

## ԱՄԵՐԻԿԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԸ

Կարգ մը խնդիրներու քննութեան համար Ամերիկեան ծերակոյտը պիտի վերսկսի իր նիստերուն Մ. Ռիլըն կրկին անգամ հաշտութեան գաշնագիրն յանձնած է ծերակոյտին:

## ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թուրքիոյ հաշտութեան պարզապէս ինչ կերպով լուծուելու հարցը քննարկեան ենթարկուած է:

## ԻՏԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ. ԲԱՏՈՒՆԾ

Համախորհուրդութիւնն կը տեղեկացնէ թէ՛ նոր իտալական խորհրդարանը բացուած է:

## ԼԷՒՈՆՆԻՈՅ ԳԵՐԻՆՆԵՐԸ

Լիւթանիոյ զօրքերը գերի բռնած են գերի և ոռու սպայակոյտներու սպանները:

մը տալու համար:

ՊՈԼՍՈՅ Թուրք թերթերն մին, Եւրոպացի քաղաքական բարձր անձնաւորութեան մը հետ տեսնուելով հետեւեալ բացատրութիւնները տուած է, Բարիկի Համաժողովին մօտ Թուրքիոյ ըրած առաջարկին վրայ:

— Կառավարութեան Գերագոյն ժողովի մօտ ըրած իր զիմուսնը, ըսած է այդ բարձր անձնաւորութիւնը գէշ ներշնչում չէ: Հիմա որ Պաղեստինի խաղաղութիւնը կնքուելու վրայ է, քննական է որ մօտենան նաև թուրքական հարցին: Սակայն, Պ. Գլեմանսո բաւական շատ յօգնած ըլլալով ընտրական պայքարէն, վաճառէ քաջուած է, հոն մի քիչ հանգիստ առնելու համար եւ 5-6 օրէն հազիւ պիտի վերադառնայ Բարիկ: Բարիկ հասնելուն պէս պիտի խորհրդակցի Համաժողովին իր ընկերներուն հետ Թուրքիոյ մասին սեւ օրոշում առնելէ առաջ:

ԼՈՅՏ ՃՕՐԸ յայտարարած է թէ, պատերազմական նախարարութիւնը և ժողովակալութիւնը ներկայիս կ'ուսումնասիրեն ծրարք մը որով կը մտադրուի շինել փապուզի մը Մանչի ծովու տակէն վարչապետը աւելցուցած է թէ երբ այս նախարարութեանց տեղեկագիրը ստանայ, խորհրդարանին պիտի խնայէ, թէ որ թուականին զահլիճը այս մասին իր որոշումը պիտի տայ:

## Ազգային Անցուդարձ

Երէկ Առաջին Տեղապահ Հայրը մասնաւոր այցելութիւն մը տուաւ քաղաքիս Իստալական զինուորական պատուիրակութեան պետին:

— Նոյնպէս Տեղապահ Հայրը երէկ շարահարկական այցելութեան գացած է անգղոս Յուսուպ Մեղրապօլիս Գեր. Պրիսոսթօմօսի, որու անուան տարեգրածն էր երէկ:

— Կարգ մը ազգայիններ այս միջոցին գովելի փախք առնեցած են որբեր որդեգրելու: Տեղապահ Հայրը այս փախքներուն գոհացում տուաւ համար, երէկ այցելած է Ամերիկեան նպատաստաւորի Որբանոցի վարչութեան և խորհրդակցութիւններ կատարած է այս մասին:

Կէս մը, Տեղապահ Հոր և որբանոցներու վարչութեան ուղարկութեան կը յանձնենք: Ետեւոր որբեր կ'որդեգրեն ո՛չ թէ հոգեւորական ընելու այլ պարզապէս սպասուէի մը շինելու համար: Բարիկի՞ թիկններու վարչակազմը այդ տարաբազ հայու զաւակներուն հանդէպ անօրինակ է: Չանոք օրն ի բուն չարաչար աշխատութեանց ենթարկել, ի հարկին իւրեանց վարմունքը համեմելով կարգ մը փողոցային նոստատիքներով պարզապէս սմարդի է:

Որբանոցներու վարչութիւնները պէտք է լաւ խորհին այս կէտին վրայ և բարոյական խոստումներ տանեն որ զիցի ծնողքներէ, կամ ուրիշ ձեւ մը մտածեն, որովհետեւ անոնց բարոյական է որ վասնպի կ'ենթարկուի, մեր ծնողքները պէտք է բմբուն թէ որբեր սրգեցրելով, միայն անոնց ֆիզիկական խնամակալն չեն ո՛չ անոնց հոգին, և ինչ օգուտ մեծամասնութիւն մը երբ հոգիէ, բարոյականէ զուրկ է այդ մեծամասնութիւնը, միթէ Հայաստան կենդանի մասկոյտներ պիտի փոխադրենք:

— Անցեալ կիրակի օր Ս. Ստեփանոս եկեղեցոյ մէջ կատարուեցաւ Պ. Գրիգորիս Կարապետեանի վարչապետական ձեռնարկութիւնը, իսկ շք. օր տեղի առնեցած էր քահանայական ձեռնարկութիւնը: Արարողութեան կը նախագահէր Տ. Տրգատ եպս. Պաղեստին և Տ. Յովհան Մ. Վ. Կարապետեան:

պատարագիչ էր: Այժմ Գրիգոր արեւոյ, կ'անցնէ իր ապաշխարութեան քառասուն օրերը:

— Երէկ Տեղապահ Հոր և Ամերիկեան նպատաստաւորի Որբանոցին տեսչուէի Տ. Հեղիի միջև խորհրդակցութիւններ կատարուած են, որոնք սա կարգապահութեան յանգած են թէ, յարկելի տիկինը հասնած է աստիճանէ Հայ Ազգային Որբանոցի տեսչութիւնը:

— Հայ Ազգային Որբանոցի նուիրած են Տիրուէի Որբանոցէսեան 3 ո, Օր. Էլիզա Արարիկեանի ամուսնութեան տարի: Տ. Մ. Էլիզաեան 4 սակի: Չայէլ Արիկեան 1 սակի Տեղապահ Հոր անուան օժանդակներ տալով:

## Տեղական Լուրեր

### ԵՐԷՎՈՒԱՆ ՇՐԴԵՂ

Ֆրանկոյ թողի մէջ երէկ գերիներու հրկիսը փճացուցած է տեւոր. երեք մեծ հաստատութիւնները: Բրէտի - Լիօնէ զբաժանուելու, Սրողտի-Պաքը և Աթանասուր կարգով թողի վաճառուցը: Այս երեք շէնքերը Ֆրանկոյ թողի մուտքին վրայ կանգնած կ'երկրայացնէին առևտրական աշխարհի փառաշին կրթողները:

Կրակը ծագած է Աթանասուրի վաճառատունէն գրիչերուն մամը 12 էն քիչ անցած: Հրդեհի սկզբնաւորութեան առաջին ներկան կրակը և գնդակահարման պատկառումը, որ անհաշուելի հնչեցուցած է օդին մէջ հրացան արարելով: Այս պայմանէն լուր տանելով կը հասնի նաև Խալիկալիսիսիսը և անմիջապէս լուր կը տրուի Բնդհանուր քանակաւորին:

Գիշ յետոյ կուգան հրէշները, ամեն կողմէ գրիչերուն այդ սրունի զգալով հրդեհին տհաճութիւնը կը փոթային օդու թեւան: Նաւահանգիստ խարսխոց նաւերէն ուժեր կը հասնին:

Հրդեհը հուճկու թափով մը շրջապատած է այդ երեք հսկայ շէնքերը և հրէշներու ճիւղերը, որոնք ճղնամամին տաջի կրկնապատկուած էին նախ անոր մնացին կտակներու այդ մոլորիկն թափը: Կը տեսնուէին Այա. Տիօթիի զանգակատան վրայ հրէշներ, որոնք ի գուր շուր կը ջրվիճէին կրակի սիւնին վրայ:

Ամեն կողմէ հասնող այս բոլոր օդու թեւանց և թափումը այնքան ճիւղերուն հակառակ կրակը լափեց այս երեք խոշոր վաճառատունները իրենց բոլոր ապրանքներով որոնք միջոցներու կը հասնին կարկի մարտէ և ազատել Գրէտի-Լիօնէի մասնները ուրուղ կը գտնուին մեծաքանակ ապրանքներ: Ետեւորագրաբար չկայ մարդկային զոհ:

Տօք. Գ. ԱՍՍԵՍՆ  
ՄԱՍՆԱԳԷՏ  
ՋԱՍԵՆ, ՄՏԱՍԵՆ և ՆԵՐՎԵՆ  
ՀԻՒԱՆՎՈՒԹԵԱՆԾ  
Նախկին շէք ար Էլիկոյ մտային հիւանդութեանց և Ն. օգնական Լօզանի համալսարանի չղային հիւանդութեանց գիւնիքներուն:  
Նախկին բժիշկ Լօզանի Bois de Cery նահանգային, մտային հիւանդանոցին և դարմանատան:  
Լօզանի համալսարանը արտաբերել վերջ 5 տարի արուեստը կիրարկած է Չօլիցիոյ մէջ: Կը դարմանէ ամեն տեսակ չղային և ներքին հիւանդութիւնները:  
Հիւանդ կ'ընդունի բաց կիր. օրեր, ամեն օր մամը 10-12 և 3էն 5: Փինարը փողոց Թի. 43 Շարնօ Թադ:



